ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 3

ք. Գյումրի «22» «հունվարի» 2026 թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Ա.Աբրահամյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն՝ Ս.Հովհաննիսյանի, (այսուհետ՝ Կատարող), ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Պայմանագրի առարկան

1. Պայմանագրով սահմանվում է «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 08 բաժնի 02 խմբի 05 դասի 1168 Արվեստների ծրագրով պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ընթացիկ դրամաշնորհների տրամադրման կարգը, որի շրջանակներում Կատարողը ստանձնում է իրականացնել՝ «Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ» 11004 միջոցառումը՝ Պայմանագրով սահմանված կարգով, իսկ Պատվիրատուն պարտավորվում է բյուջեից հատկացված գումարի շրջանակներում Կատարողին տրամադրել 101142000 /հարյուր մեկ միլիոն հարյուր քառասուներկու հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, ներառյալ՝ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

2. Ծառայության ընդհանուր նկարագրությունը ներկայացված է Պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Հավելված 1»-ում:

Կողմերի իրավունքները և պարտականությունները

3. Պատվիրատուն իրավունք ունի.

1) Ցանկացած ժամանակ ստուգելու Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2) Պահանջել Կատարողից Պայմանագրով սահմանված ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

4. Պատվիրատուն պարտավոր է.

1) Պայմանագրի շրջանակներում աջակցել Կատարողին.

5. Կատարողն իրավունք ունի.

1) Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը:

6. Կատարողը պարտավոր է.

1) Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2) Ծառայությունը մատուցել Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

3) Կատարել Պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

4) Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծառայության իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պատվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարման կարգը և ժամկետները

7. 2026 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվող պետական աջակցության չափը կազմում է 101142000 /հարյուր մեկ միլիոն հարյուր քառասուներկու հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, ներառյալ՝ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

8. Կատարողը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 2-ը Պատվիրատուին է ներկայացնում տվյալ եռամսյակում մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման ակտը (երկու օրինակից), իսկ 4-րդ եռամսյակի համար՝ մինչև դեկտեմբերի 25-ը:

9. Պատվիրատուն հանձնման–ընդունման ակտը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը կամ ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը: Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից:

10. Պատվիրատուն վճարումներն իրականացնում է համամասնորեն՝ ամսական կտրվածքով, անկանխիկ՝ դրամական միջոցները մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև դեկտեմբերի 25-ը՝ Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Հավելված 3»-ում սահմանված վճարման ժամանակացույցի:

11. «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ կետի հիմքով, բյուջեից տրամադրվող դրամաշնորհների և սուբսիդիաների նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների: Եթե սույն կետում նշված հոդվածներով նախատեսված ծրագրերը և միջոցառումները ենթական չեն ավելացված արժեքի հարկով հարկման կամ ենթակա են հարկման պետական բյուջեից ավելացված հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Կողմերի պատասխանատվությունը

12. Պայմանագրով հատկացված գումարի շրջանակներում Կատարողի կողմից աշխատանքների և ծառայությունների գնումները պետք է իրականացվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

13. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կարարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պատվիրատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կատարողին վճարվելիք գումարներից:

14. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պայմանագրի գործողության ժամկետը

15. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը:

Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

16. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

Եզրափակիչ դրույթներ

17. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

18. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, բաղկացած է 2 էջից և 3 հավելվածից՝ «Հավելված 1» 1 էջ, «Հավելված 2» 1 էջ, «Հավելված 3» 1 էջ, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի Աբովյան 131
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն հ/հ 900211255022	ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն հ/հ 900218000934
ՀՎՀՀ 05558305	ՀՎՀՀ 05501036
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ա. Աբրահամյան	Ս. Հովհաննիսյան
Կ.Տ.	Կ.Տ.

«Հավելված 1
2026 թ. «հունվարի» «22» կնքված
Թիվ 3 պայմանագրի»

2026 թվականին մատուցվող ծառայությունների ընդհանուր նկարագրությունը
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ

Նվագախմբի գործունեության հիմնական նպատակը և առարկան է մշակութային գործունեության իրականացումն է, մշակութային գործունեությունը՝ մշակութային արժեքների և առարկաների պահպանումը, ստեղծումը, տարածումը մշակութային բարիքների ծառայությունների ու արտադրամքի /ապրանքի/ իրացումը:

Նվագախումբն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝
- ձայներիզների, ձայնասկավառակների թողարկում և իրացում
- հրատարակչական և գովազդային գործունեություն
- համերգային գործունեություն ձեռնարկությունների, կազմակերպությունների և բնակչության համար:

Բնակչության վճարովի ծառայությունները կատարվում են գնացուցակներով նախատեսված գներով և տարիֆներով, իսկ դրանց բացակայության դեպքում պայմանագրային գներով:

Նվագախմբի համերգային գործունեությունը նպատակաուղղվում է անհատի բազմակողմանի զարգացմանը, ազգային մշակույթի պահպանմանը:

Նվագախումբը կատարում է համերգային և ստեղծագործական պատվերներ: Պատվերների կատարման համար սահմանվում է աշխատանքների ծավալը, նյութական, ֆինանսական և այլ ռեսուրսների ապահովվածությունը:

Նշված ծառայություններն իրականացվում են ՀՀ օրենսդրությամբ, իրավական ակտերով՝ նախատեսված ձևով և կարգով:

Ծառայությունների մատուցման համար նվագախմբի համար սահմանվում են հետևյալ ցուցանիշները.
- ապահովել դեբյուտային-նորարարական առնվազն 2 ծրագրի /համերգի/ իրականացում՝ ներգրավելով երիտասարդ երաժիշտների ներուժը, ապահովելով դասական երաժշտության կատարումը
- համագործակցել հանրապետության լավագույն նվագախմբերի, խմբավարների հետ, ապահովել դասական չբեմադրված ստեղծագործությունների կատարումները /ծրագրում ընգրկել հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ/
- կազմակերպել 26-ից ոչ պակաս համերգ՝ ապահովելով 11700 հանդիսատեսի ներկայություն և դահլիճի ոչ պակաս 75 տոկոս միջին բեռնվածություն
- ըստ անհրաժեշտության ապահովել մասնակցություն և համագործակցություն Պատվիրատուի կազմակերպած կամ հովանավորած միջոցառումներին
- իրականացնել առնվազն 2 հյուրախաղային գործունեություն:

Քաղաքացիական հասարակության տեղեկացվածության և հաղորդակցման բարձրացում արվեստի ոլորտում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի Աբովյան 131
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900211255022	ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900218000934
ՀՎՀՀ 05558305	ՀՎՀՀ 05501036
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի տնօրեն՝
Ա. Աբրահամյան	Ս. Հովհաննիսյան

Կ.Տ.

Կ.Տ.

«Հավելված 2
2026 թ. «հունվարի» «22» կնքված
Թիվ 3 պայմանագրի»

2026 թվականի համար սահմանված ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ

1. Ֆինանսական ցուցանիշներ

	Անվանումը՝ Երաժշտարվեստի պարարվեստի համերգներ

		քանակը	Գումարը հազ. դրամ
Քանակական	Հանդիսատեսի թվաքանակը	11700	
	Համերգների քանակը	26	
	Մշակութային և այլ միջոցառումներին մասնակցության քանակը	22	
	Նոր համերգային բեմադրությունների քանակը	2	
	Հյուրախաղերի քանակը	2	
Որակական	Ստացիոնար մեկ համերգի համար դահլիճի միջին բեռնվածությունը	75	
Մատուցվող ծառայության վրա կատարված ծախսը			**101142,0**

2.Ոչ ֆինանսական ցուցանիշներ

Ցուցանիշներ	**միավոր**	**Քանակ**
1. Հանդիսատեսի ընդհանուր քանակը	մարդ	11700
2. Համերգների առավելագույն քանակը	համերգ	26
3. Մեկ համերգի հաճախելիության նորմատիվը	մարդ	455
4. Նոր և հիմնովին վերականգնվող համերգներ	համերգ	2
5. Նորմատիվային եկամուտներ՝ այդ թվում	հազ. դրամ	5000000
ա/ տոմսերի վաճառքից ստացվող հասույթ	հազ. դրամ	500000
բ/ այլ եկամուտ	հազ.դրամ	4500000
6. նորմատիվայի ծախսեր	հազ. դրամ	106142000
7. Տոմսի միջին գինը	դրամ	2000
8. Ստացիոնար մեկ համերգի համար դահլիճի միջին բեռնվածությունը	տոկոս	75
9. Տրամադրվող դրամաշնորհի չափը	դրամ	**101142000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի Աբովյան 131
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900211255022	ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900218000934
ՀՎՀՀ 05558305	ՀՎՀՀ 05501036
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Ա. Աբրահամյան	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ս. Հովհաննիսյան

Կ.Տ. Կ.Տ.

«Հավելված 3
2026 թ. «հունվարի» «22» կնքված
Թիվ 3 պայմանագրի»

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
2026 թ. գումարների վճարման ժամանակացույցն ըստ ամսական բացվածքի՝

N	**Ամիսը**	Գումարը (հազ. դրամ)
1.	Հունվար	0,0
2.	Փետրվար	10114,2
3.	Մարտ	10114,2
4.	Ապրիլ	8394,8
5.	Մայիս	8394,8
6.	Հունիս	8495,9
7.	Հուլիս	8394,8
8.	Օգոստոս	8394,8
9.	Սեպտեմբեր	8495,9
10.	Հոկտեմբեր	10114,2
11.	Նոյեմբեր	10114,2
12.	Դեկտեմբեր	10114,2

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ
ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի Աբովյան 131
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900211255022	ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900218000934
ՀՎՀՀ 05558305	ՀՎՀՀ 05501036
ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար	ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի տնօրեն՝
Ա. Աբրահամյան	Ս. Հովհաննիսյան

Կ.Տ.

Կ.Տ.